Արձանագրություն N 9

ՀՀ առողջապահության նախարարության 2018 թվականի կարիքների համար անհրաժեշտ բաց մրցույթով դեղերի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/1/2» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «12» «Մարտի» 2018թ.
ժամը 16:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Մ. Սևումյան
Հանձնաժողովի անդամներ	Մ.Հարությունյան Ն.Թովմասյան
Հանձնաժողովի քարտուղար	Հ.Մնացականյան

1. ՀՀ ֆինանսների նախարարությունից պարզաբանում, Կազմակերպությունների կողմից գրություններ ստանալու մասին

(Մ.Սևումյան)

Հաշվի առնելով, որ գնման ընթացակարգի շրջանակներում, ՀՀ առողջապահության նախարարությունը 21.12.17թ. «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ից ստացել է գրություն, որում հարց է բարձրացվում պայմանագիր կնքելու ժամանակ գինը սահմանելու արժույթի վերաբերյալ, մասնավորապես, քանի որ Մրցույթին մասնակցել և որոշ չափաբաժիններով առաջին տեղ է զբաղեցրել ՀՀ ոչ ռեզիդենտ կազմակերպությունը, ուստի պայմանագիրը ըստ հրավերի պետք է կնքվի արտարժույթով, մինչ դեռ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ը գրությամբ խնդրել է անցկացնել նոր մրցույթ՝ հիմք ընդունելով որ հրավերում սահմանված չի եղել ՀՀ դրամով առավելագույն գին սահմանելու պայմանը՝ արտարժույթով պայմանագիր կնքվելու դեպքում:

Մասնակիցների կողմից որակավորման փաստաթղթերը ներկայացնելիս, այս հարցը կրկին անգամ բարձրացվել է, որի լուծման նպատակով, որոշում է կայացվել՝ կասեցնել գնման ընթացակարգը և պարզաբանում ստանալու նպատակով դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն:

Արձանագրությանը կցվում են սույն հարցին առընչվող փաստաթղթերը:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված պարզաբանման շրջանակներում, որոշվեց ՓԱՐԹՆԵՐՇԻՓ ՖՈՐ ՍԸՓԼԱՅ ՉԵԻՆ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԻՆՔ-ին առաջարկել /26.02.18թ./ պայմանագիր կնքելիս սահմանել ՀՀ դրամով առավելագույն պայմանագրային գին՝ հայտերի բացման օրվա դրությամբ ԿԲ-ի կողմից սահմանված կուրսով: Վերջինիս դիրքորոշման ներկայացման համար տրվեց վերջնաժամկետ՝ 27.02.18թ. ժամը 17:00 /ծանուցումը կցվում է/:

Սահմանված վերջնաժամկետին, Կազմակերպության կողմից ներկայացվեց գրություն՝ ըստ որի վերջինս համաձայն չէ կնքել պայմանագիր՝ նշված պայմանով /կցվում է/:

«ՓԱՐԹՆԵՐՇԻՓ ՖՈՐ ՍԸՓԼԱՅ ՉԵԻՆ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ԻՆՔ-ի 26.01.2018թ. ՀՀ առողջապահության նախարարություն է ներկայացրել գրություն, որով նշել է, որ Ընկերությունը «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/1/2» ծածկագրով գնման ընթացակարգի 6-րդ, 29-րդ, 30-րդ, 36-րդ չափաբաժինների համար գնային առաջարկ է ներկայացրել Հայաստանի Հանրապետությունում չգրանցված դեղերի համար՝ նշելով, որ դրանք չունեն ԱՀԿ նախաորակավորում և գրանցված չեն Եվրոպական միության լիիրավ անդամ երկրներից որևէ մեկում կամ Ամերիկայի Միացյալ Նահանգներում կամ Ճապոնիայում:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.17թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված Կարգի 48-րդ կետի պահանջները, 07.03.18թ. ՓԱՐԹՆԵՐՇԻՓ ՖՈՐ ՍԸՓԼԱՅ ՉԵԻՆ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԻՆՔ-ին առաջարկվել է շտկել 6, 29, 30 չափաբաժիններով ներկայացված փաստաթղթերը: Սակայն 09.03.18թ. վերջինս ներկայացրել է գրություն /կցվում է/, ըստ որի կրկին անգամ հայտնում է, որ համաձայն չէ կնքել պայմանագիր՝ ֆիքսելով դրամով պայմանագրային գին: Միաժամանակ, ելնելով վերոգրյալից հայտնել է, որ նպատակահարմար չի գտնում կատարել լրացուցիչ ծավալի աշխատանքներ նախկինում ներկայացրած փաստաթղթերը շտկելու համար, քանի որ պայմանագիր ամեն դեպքում չի կնքվելու:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.17թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները, որոշվեց ՓԱՐԹՆԵՐՇԻՓ ՖՈՐ ՍԸՓԼԱՅ ՉԵԻՆ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԻՆՔ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

«Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ստացվել է գրություն, առ այն մասին, որ 11 և 12 չափաբաժիններով ներկայացված դեղերի արտադրող կազմակերպությունը չի արտադրելու և առկա չեն քանակներ: Հետևաբար, նշված չափաբաժինները չեն կայանա, քանի որ այլ Կազմակերպությունների կողմից առաջարկ չի արվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Երկրորդ տեղեր զբաղեցրած մասնակիցներին հաղթող ճանաչելու մասին

(Մ.Սևումյան)

Հաշվի առնելով, որ ՓԱՐԹՆԵՐՇԻՓ ՖՈՐ ՍԸՓԼԱՅ ՉԵԻՆ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԻՆՔ-ը համաձայն չէ պայմանագիր կնքել՝ ՀՀ դրամով առավելագույն գին սահմանելու պայմանով, որոշվեց 6-րդ, 29-րդ, 30-րդ չափաբաժինների մասով «Արփիմեդ» ՍՊԸ-ին և 14-րդ չափաբաժնի մասով «Նատալի Ֆարմ» ՍՊԸ–ին 2-րդ տեղ զբաղեցրած մասնակիցներին ճանաչել հաղթող և վերջիններին առաջարկել ներկայացնելու որակավորման փաստաթղթերը՝ նշված չափաբաժինների համար:

Վերջիններիս կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացվել են, բացի այդ ՀՀ առողջապահության նախարարությունը ստացել է նոր գնային առաջարկներ վերջիններիս կողմից /կցվում է/:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Հայաստանի Հանրապետության ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնելու մասին

(Մ.Սևումյան)

(Մ.Սևումյան)

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով հարցում է ներկայացվել ՀՀ ԿԱ ՊԵԿ և ստացվել պատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին

(Մ.Սևումյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը՝ որոշվել էր առաջարկել Մասնակիցներին ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Կազմակերպությունների կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացվել են:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Ընթացակարգի գնահատման և ամփոփման մասին

(Մ.Սևումյան)

Հիմք ընդունելով մասնակիցների կողմից ներկայացված հայտերը և «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությունները.

1. Որոշվեց «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/1/2» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել և հաղթողներ ճանաչել՝

- ✓ «Արփիմեդ» ՍՊԸ-ին՝ 1,2,3,4,5,6,8,26,27,28,29,30,31 չափաբաժինների մասով՝ 292.611.350 ՀՀ դրամ 3 լումա պայմանագրային գումարով:
- ✓ «Նատալի ֆարմ» ՍՊԸ-ին՝ 14,33 չափաբաժինների մասով՝ 444.434.980 դրամ պայմանագրային գումարով:
- ✓ «Արֆարմացիա» ՓԲԸ-ին՝ 16,17,18 չափաբաժինների մասով՝ 21.312.223 դրամ պայմանագրային գումարով:
- ✓ «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ին՝ 13-րդ չափաբաժնի մասով՝ 15.840.000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

- ✓ «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ին՝ 7-րդ չափաբաժնի մասով՝ 11.836.000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:
- ✓ «Արմֆարմ» ՍՊԸ-ին՝ 19,21,24,32 չափաբաժինների մասով՝ 83.889.684 ՀՀ դրամ 80 լումա պայմանագրային գումարով:
- ✓ «Բեյբի-Սիմ» ՍՊԸ-ին՝ 22,23,25 չափաբաժինների մասով՝ 26.960.400 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

2. Որոշվեց «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/1/2» ծածկագրով գնման ընթացակարգի 9,15,34,35,37,40,41,42,44,46,47 չափաբաժինները հայտարարել չկայացած հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, իսկ 10,11,12,20,38,39,43,45 չափաբաժինները՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն: 36-րդ չափաբաժնի մասով պայմանագիր չի կնքվում, քանի որ մրցույթի և ՀՀ կառավարության 30.01.2015թ. թիվ 78-Ն որոշման շրջանակներում, ստացված ամենացածր գնային առաջարկի հիման վրա Լես Լաբողատուար Սեղվիեի կողմից ստացվել է նոր իջեցված գնային առաջարկ:

3. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մաս, որոշվեց «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/1/2» ծածկագրով գնման ընթացակարգի անգործության ժամկետ սահմանել 2018 թվականի մարտի 13-ից մինչև մարտի 23-ը ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Մ. Սևումյան

Անդամներ՝ ---------- Մ. Հարությունյան

---------- Ն. Թովմասյան

Քարտուղար՝ ---------- Հ. Մնացականյան

Նատալի Ֆարմ
Натали Фарм
Natali Pharm

01/27.02.2018

ՀՀ առողջապահության նախարար

պարոն Լևոն Ալթունյանին

Հարգելի պարոն Ալթունյան,

Տեղեկացնում ենք Ձեզ, որ Նատալի Ֆարմ ՍՊԸ-ն մասնակցել է «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/1/2» ծածկագրով բաց մրցույթին և էպոետին բետա լուծույթ ներարկման 2000ՄՄ/0,3մլ նախալցված ներարկիչներ դեղի մասով որպես միավորի գին առաջարկել է 5241 ՀՀ դրամ:

Հայտնում ենք Ձեզ մեր պատրաստակամությունը նվազեցնել վերոնշված գինը և առաջարկել էպոետին բետա լուծույթ ներարկման 2000ՄՄ/0,3մլ նախալցված ներարկիչներ դեղի միավորի գինը 4850 /չորս հազար ութ հարյուր հիսուն / ՀՀ դրամ:

Նատալի Ֆարմ ՍՊԸ տնօրեն Ա. Ասատրյան

01222567
«ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ»
"НАТАЛИ ФАРМ"
"NATALI FARM"

«Նատալի ֆարմ» ՍՊԸ ք. Երևան, Աբովյան 42/2, հեռ.՝ (+374 10) 74 42 12, 72 06 20; ֆաքս՝ 74 42 20
«Натали Фарм» ООО г. Ереван, ул Абовяна 42/2, тел.: (+374 10) 74 42 12, 72 06 20; факс: 74 42 20
«Natali Pharm» Ltd Yerevan RA, # 42/2 Abovyan st., tel.: (+374 10) 74 42 12, 72 06 20; fax: 74 42 20

«ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/1/2» ծածկագրով բաց մրցույթի

հանձնաժողովի քարտուղար

Հ. Մնացականյանին

Տեղեկացնում ենք Ձեզ, որ Նատալի Ֆարմ ՍՊԸ- ն մասնակցել է *«ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/1/2» ծածկագրով բաց մրցույթին* և Էպոետին բետա լուծույթ ներարկման 2000ՄՄ/0,3մլ նախալցված ներարկիչներ դեղի մասով որպես միավորի գին առաջարկում է՝

	առանց ԱԱՀ	ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ
Միավորի գին	4041,5	808,3	4849,8
Ընդհանուր գին	359 693 500,0	71 938 700,0	431 632 200,0

Մեզ ուղղված պայմանագիր կնքելու որոշման մեջ Էպոետին բետա լուծույթ ներարկման դեղի համար սխալմամբ նշված է առանց ԱԱՀ 345 320 000 ընդհանուր գումարը, խնդրում ենք ուղղել այն և որպես հիմք ընդունել վերոնշված աղյուսակում ներկայացված գումարը:

Նատալի Ֆարմ ՍՊԸ տնօրեն՝ Ա. Ասատրյան

TOPUZYAN KAREN 3303760217

Digitally signed by TOPUZYAN KAREN 3303760217

Հավելված 5
«ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/1/2» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով **«ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/1/2»** ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, « ԱՐՓԻՄԵԴ» ՍՊԸ -ն առաջարկում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Չափաբաժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
6	Ամիտրիպտիլին դեղահատ 25մգ, amitriptyline (amitriptyline hydrochloide) tablets 25mg	4.745.000 Չորս միլիոն յոթ հարյուր քառասունհինգ հազար դրամ	949.000 Ինը հարյուր քառասունինը հազար դրամ	5.694.000 Հինգ միլիոն վեցհարյուր իննսունչորս հազար դրամ
29	Հալոպերիդոլ դեղահատեր 5 մգ. haloperidol tablets 5mg	6.416.666.67 Վեց միլիոն չորսհարյուր տասնվեց հազար վեցհարյուր վաթսունվեց դրամ վաթսունյոթ լումա	1.283.333,33 Մեկ միլիոն երկուհարյուր ութսուներեքհազար երեքհարյուր երեսուներեք դրամ երեսուներեք լումա	7.700.000 Յոթ միլիոն յոթհարյուր հազար դրամ
30	Մետֆորմին դեղահատեր 1000 մգ, metformin (metformin hydrochloride) tablets 1000mg	80.791.666,67 Ութսուն միլիոն յոթհարյուր իննսունմեկ հազար վեցհարյուր վաթսունվեց դրամ վաթսունյոթ լումա	16.158.333,33 Տասնվեց միլիոն հարյուր հիսունութ հազար երեքհարյուր երեսուներեք դրամ երեսուներեք լումա	96.950.000 Իննսունվեց միլիոն ինը հարյուր հիսուն հազար դրամ

« ԱՐՓԻՄԵԴ» ՍՊԸ –տնօրեն Վաչագան Ղազարյան

Digitally signed by GHAZARYAN VACHAGAN 2001560028
Date: 2018.02.28 10:32:43 GMT+04:00

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 60) 80 80 03
էլ. փոստ info@moh.am

_____N _____
Ձեր N _____

ԱՀ/06.1/1579-18
13.02.18թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ ԿԱՐԵՆ ԹԱՄԱԶՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Թամազյան

Տեղեկացնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարության 2018թ. կարիքների համար դեղերի ձեռքբերման համար հայտարարված «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/1/2» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել և առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել ՀՀ ոչ ռեզիդենտ կազմակերպություն, որը գնային առաջարկը ներկայացրել է ԱՄՆ դոլարով:

Հիշյալ գնման ընթացակարգի շրջանակներում, ՀՀ առողջապահության նախարարությունը գրություն է ստացել «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ից, որին ՀՀ առողջապահության նախարարությունը 2017 թվականի դեկտեմբերի 28-ին պատասխանել է ՆՁ/06.1/16149-17 գրությամբ (գրությունները կցվում են): Ընդ որում, ՀՀ առողջապահության նախարարության պատասխանի հիմնական բովանդակությունը կայանում է նրանում, որ կնքված պայմանագրի գինը ՀՀ դրամով կարող է բարձրանալ՝ արտարժույթի գնի բարձրացման պարագայում:

Հիշյալ գնման ընթացակարգի հրավերում (կցվում է) սահմանված է եղել արտարժույթով գնային առաջարկը ՀՀ դրամով համեմատելու կարգը, սակայն նշված չի եղել արտարժույթով կնքվող պայմանագրում փոխարժեքի տատանման դեպքում ՀՀ դրամով առավելագույն գին սահմանելու պայման:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ փոխարժեքի տատանման դեպքում հրավերում ՀՀ դրամով առավելագույն պայմանագրային գնի սահմանման պայմանների

չսահմանելը, խնդրում եմ Ձեր դիրքորոշումը ՀՀ առողջապահության նախարարության հետագա քայլերի ուղղությամբ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ

ՆԵԼՍՈՆ ԶՈՒԼՈՅԱՆ

Կատարող Հասմիկ Մնացականյան
Ֆինանսատնտեսագիտական բաժին
հեռ. (060) 80-80-03 (1703)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

Հեռ.՝ (+374 11) 800 , ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

04/27-1/3374-18
26.02.18թ

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ՆԵԼՍՈՆ ԶՈՒԼՈՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ «ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ» ՍՊԸ-ԻՆ

Ի պատասխան Ձեր 13/02/2018թ.
թիվ ՆԶ/06.1/1579-18 և «Նատալի ֆարմ» ՍՊԸ-ի
15/02/2018թ. թիվ 01-15 գրությունների

Հարգելի պարոն Զուլոյան

Ուսումնասիրելով վերոհիշյալ գրությունները՝ հայտնում ենք հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 15-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ պատվիրատուն պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում.
- 24-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի հայտով ներկայացվող գնի հաշվարկման կարգը, ներառյալ՝ գինը արտարժույթով ներկայացվելու դեպքում դրա փոխարժեքը.
- 34-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ ենթակետի համաձայն՝ եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են ՀՀ դրամով՝ հրավերով սահմանված փոխարժեքով:

ՀՀ ֆինանսների նախարարի համապատասխան հրամաններով հաստատված պայմանագրերի օրինակելի ձևերով սահմանված է, որ անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հիմք ընդունելով վերոգրյալը գտնում ենք, որ եթե ոչ ռեզիդենտ մասնակիցը գնային առաջարկը ներկայացրել է արտարժույթով՝

• ապա հանձնաժողովը պետք է այն փոխակերպի ՀՀ դրամի՝ հրավերով նախատեսված փոխարժեքով և գնային առաջարկների համեմատումն իրականացնի ՀՀ դրամով.

• և ճանաչվել ընտրված մասնակից, ապա վերջինիս հետ կնքվող պայմանագրում գինը պետք է նախատեսվի ներկայացված արտարժույթով, պայմանով, որ արտարժույթով իրականացվելիք վճարումների հանրագումարը չպետք է ավել լինի հրավերով նախատեսված փոխարժեքով փոխարկերպման արդյունքում ձևավորված ՀՀ դրամից:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հանրային ֆինանսների կառավարման
մեթոդաբանության վարչություն
հեռ. 011 800 258

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 60) 80 80 03
էլ. փոստ info@moh.am

_____N _____
Ձեր N _____

«ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ» ՍՊԸ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԱՍԱՏՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ասատրյան

Ուսումնասիրելով «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի 21.12.2017թ. N 01/21 գրությունը՝ տեղեկացնում եմ, որ «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/1/2» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը կազմվել է լիազոր մարմնի կողմից սահմանված օրինակելի ձևով՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասի, եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ հրավերով սահմանված փոխարժեքով:

Հիմք ընդունելով վերոհիշյալ հոդվածը՝ «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/1/2» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.5 կետով սահմանվել է. «Եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը: Եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ բացման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքով»:

Ինչ վերաբերում է Ձեր կողմից ներկայացված նկատառմանը, որ վերոհիշյալ գնման ընթացակարգը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի

9-րդ մասին, ապա ցանկանում եմ նշել, որ «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/1/2» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.5 կետը հանդիսանում է օրենքով պահանջվող կարգի սահմանում:

Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը, հարկ եմ համարում նշել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը նպատակահարմար չի գտնում վերոհիշյալ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելը կամ վերահայտարարելը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՆԵԼՍՈՆ ԶՈՒԼՈՅԱՆ

Կատարող Հասմիկ Մնացականյան
Ֆինանսատնտեսագիտական բաժին
հեռ. (060) 80-80 03 (1703)

Նատալի Ֆարմ
Натали Фарм
Natali Pharm

0101 21.12.2017թ.

ՀՀ Առողջապահության Նախարարության
Աշխատակազմի ղեկավար
Պարոն՝ Ն. Զուլոյանին

ՀՀ ԱՆ 40896
22.12.17թ.

Հարգելի պարոն Զուլոյան

ՀՀ Առողջապահության նախարարությունը հրապարակել է բաց մրցույթ հրավեր, մեկ փուլով, էլեկտրոնային գնումների Արմեպս համակարգի միջոցով՝ «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/1/2» ծածկագրով (այսուհետ՝ Մրցույթի հրավեր), որին մասնակցություն են ունեցել մի շարք ընկերություններ, այդ թվում «Նատալի ֆարմ» ՍՊԸ-ն և «ՓԱՐԹՆԵՇԻՓ ՖՈՐ ՍԸՓԼԱՅ ՉԵՅՆ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԻՆՔ» ընկերությունները:

Մեր կարծիքով Մրցույթի հրավերը հակասում է Գնումների մասին ՀՀ օրենքի 28 հոդվածի 1-ին մասի 9-րդ կետին և նշված Մրցույթի հրավերի շրջանակներում կայացված ակտերը պետք է վերանայվեն և անցկացվի նոր մրցույթ: Այսպես, համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի նշված հոդվածի.

«Հոդված 28. Հրավերի բովանդակությունը

1. Հրավերը պետք է պարունակի՝

9) հայտով ներկայացվող գնի հաշվարկման կարգը, ներառյալ՝ գինը արտարժույթով ներկայացվելու դեպքում դրա փոխարժեքը.»

Մրցույթի հրավերը չի պարունակում գնի հաշվարկման կարգը այն դեպքում, երբ գինը ներկայացվել է արտարժույթով: Մրցույթի հրավերի կետ 8.5. անդրադառնում է միայն առաջարկների համեմատությանը:

«8.5 .... Եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ բացման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքով: »

Այսինքն, այս կետը կարգավորում է, թե համեմատությունը ինչպես է կատարվում, բայց հստակ չի նկարագրում, որ համեմատության օրը կիրառվում է համապատասխան փոխարժեք և սահմանվում է ապրանքի գինը ՀՀ դրամով, այնինչ հստակ կարգ պետք է նկարագրված լիներ:

Մրցույթի հրավերի տառացի մեկնաբանությունից ելնելով Մրցույթի հաղթող ոչ ռեզիդենտը, որը ԱՄՆ դոլարով գին է ներկայացրել կարող է հաղթել մրցույթը, քանի որ համեմատության կատարման պահին իր առաջարկը ԱՄՆ դոլարով ավելի ցածր է, բայց հետագայում պահանջել ՀՀ առողջապահության նախարարությունից վճարումները կատարել ԱՄՆ դոլարով, քանի որ Հրավերը չի կարգավորել գինը սահմանելու կարգը: Այդ պահանջը եթե նույն մերժվի ՀՀ առողջապահության նախարարության կողմից, Մրցույթի հաղթողը դատական կարգով կարող է հաջողության հասնել:

«Նատալի ֆարմ» ՍՊԸ ք. Երևան, Աբովյան 42/2, հեռ.՝ (+374 10) 74 42 12, 72 06 20; ֆաքս՝ 74 42 20
«Натали Фарм» ООО г. Ереван, ул Абовяна 42/2, тел.: (+374 10) 74 42 12, 72 06 20; факс: 74 42 20
«Natali Pharm» Ltd Yerevan RA, # 42/2 Abovyan st., tel.: (+374 10) 74 42 12, 72 06 20; fax: 74 42 20

Եթե ՀՀ առողջապահության նախարարությունը հետագայում կիրառի Մրցույթին ներկայացված գինը ԱՄՆ դոլարով վճարումների համար, ապա ապրանքի դիմաց վճարումը հետագայում ՀՀ դրամով կարող է ավելի բարձր լինել, քան մեր Ընկերության կողմից Մրցույթին ներկայացված ՀՀ դրամով գինը:

Կարծում ենք, որ Գնումների մասին ՀՀ օրենքի 28 հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի խախտումը հանգեցնում է Մրցույթի անվավերությանը և առաջարկում ենք կայացնել համապատասխան որոշում և հայտարարել նոր մրցույթ՝ կարգավորելով հրավերում արտարժույթով ներկայացված առաջարկի ՀՀ դրամով գնի որոշման կարգը:

Բացի վերը նշվածից, ընդհանուր առմամբ գտնում ենք, որ ՀՀ ռեզիդենտի և Մաքսային միության անդամ չհանդիսացող ոչ ռեզիդենտի միջև Մրցույթի հրավերը պետք է որոշակի առանձնահատկություններ սահմանի՝ հաշվի առնելով հավասար մրցակցության սկզբունքները: ՀՀ տարածքում գործող ընկերությունը վճարում է ԱԱՀ և շահութահարկ իր գործունեությունից և առաջարկված գործարքից, իսկ ոչ ռեզիդենտը չի կատարում այդ վճարումները ՀՀ տարածքում: Եթե ոչ ռեզիդենտը գրանցված է բարենպաստ հարկային գոտում, ապա ՀՀ տարածքում գործող ընկերությունը որևէ դեպքում չի կարող տրամադրել մրցունակ գին բաց մրցույթի հրավերների ժամանակ: Այս խնդիրը մենք առանձին լրացուցիչ կուսումնասիրենք և հիմնավորումներ կներկայացնենք, այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ Մրցույթի հրավերը խախտում է Օրենքը և չի սահմանում արտարժույթով ներկայացրած առաջարկի ՀՀ դրամով գնի որոշման կարգը, խնդրում ենք անցկացնել նոր մրցույթ:

Հարգանքներով՝

Գլխավոր տնօրեն՝ Ա.Ասատրյան

medac

Gesellschaft für klinische
Spezialpräparate mbH

Министру здравоохранения Республики Армения
господину Левону Алтуняну

г. Ведель, 26.01.2018г

Уважаемый господин Алтунян!

Фармацевтическая компания медак ГмбХ, Германия (medac GmbH, Germany), свидетельствует Вам свое почтение и уважение. Сообщаем, что японская компания Киова Хаку Кирин (Kyowa Hakko Kirin), являющаяся производителем готовой лекарственной формы препарата Аспарагиназа медак, лиофилизат для приготовления раствора для внутривенного и внутримышечного введения 5000 МЕ (флаконы) и Аспарагиназа медак, лиофилизат для приготовления раствора для внутривенного и внутримышечного введения 10000 МЕ (флаконы), что отражено в регистрационном удостоверении препарата, полностью остановила производство лекарственного средства Аспарагиназа медак 5000 МЕ и Аспарагиназа медак 10000 МЕ.
В связи с этим, лекарственное средство Аспарагиназа 5000 МЕ и Аспарагина 10000 МЕ не поставляется и в дальнейшем не будет поставляться ни в одну из стран, где оно было зарегистрировано – Западная и Восточная Европа, Россия, страны СНГ, в том числе Армения. На складе медак ГмбХ остатков вышеуказанного препарата не имеется.

Дзинтарс Яунземс,
Директор по маркетингу и продажам
в странах СНГ и Балтии
медак Интернейшнл
Медак ГмбХ

Theaterstraße 6
medac GmbH
22880 Wedel Germany

PFSCM
Partnership for Supply Chain Management

TO THE EVALUATION COMMITTEE OF
PROCUREMENT PROCEDURE
CODE ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/1/2

FROM WESLEY KREFT THE DIRECTOR OF
PARTNERSHIP FOR SUPPLY CHAIN MANAGEMENT INC
GLOBAL SUPPLY CHAIN

In response to the letter dated as of March 7, 2018, we would like to remind you that PARTNERSHIP FOR SUPPLY CHAIN MANAGEMENT INC does not accept the new request not provided by the tender invitation, but presented by the letter dated as of February 26, 2018 and will not sign a contract with the term fixing the contract price by AMD in the framework of the Procurement Procedure Code ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/1/2 announced by the Ministry of Health of the Republic of Armenia.

Therefore, taking into consideration the fact that there will be no contract signed between the Ministry of Health of the Republic of Armenia and PARTNERSHIP FOR SUPPLY CHAIN MANAGEMENT INC as a result of the given Procurement Procedure, we do not find it rational to undertake an additional amount of work to correct the documents submitted for Lot 6, Lot 29 and Lot 30 of the Procurement Procedure Code ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/1/2 announced by the Ministry of Health of the Republic of Armenia.

Sincerely,

PARTNERSHIP FOR SUPPLY CHAIN MANAGEMENT INC
COMMONWEALTH OF MASSACHUSETTS
U.S.A.

(signature)

Wesley Kreft

1616 Fort Myer Drive, 12th Floor
Arlington, Virginia 22209-3100 USA
+1.571.227.8600

Polanerbaan 11
3447 GN Woerden, The Netherlands
+31.348.489.630

PFSCM's Quality Management System has been certified to ISO 9001:2015 Quality Management System Standard by UL DQS Inc. Ref Registration 4100129936 QM15.

PFSCM is a partnership of JSI and MSH

JSI RESEARCH & TRAINING INSTITUTE, INC
msh
Imperial logistics

www.pfscm.org | pfscm@pfscm.org

«ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/1/2» ծածկագրով

գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ՓԱՐԹՆԵՐՇԻՓ ՖՈՐ ՍԸՓԼԱՅ ՉԵԻՆ ՄԵՆԵՋՄԵՆԹ
ԻՆՔ ԳԼՈԲԱԼ ՍԸՓԼԱՅ ՉԵԻՆ-ի
Տնօրեն Ուեսլի Կրեֆտից

Ի պատասխան 2018թ. մարտի 7-ի գրության՝ կրկին հայտնում եմ, որ ՓԱՐԹՆԵՐՇԻՓ ՖՈՐ ՍԸՓԼԱՅ ՉԵԻՆ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԻՆՔ-ը չի ընդունում հրավերով չնախատեսված, սակայն 2018 թվականի փետրվարի 26-ի գրությամբ ներկայացված նոր պահանջը և ՀՀ առողջապահության նախարարության կողմից հայտարարված N ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/1/2 գնման ընթացակարգի շրջանակներում չի կնքելու պայմանագիր՝ պայմանագրում գինը դրամով ֆիքսելու պայմանով:

Ուստի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ գնման ընթացակարգի արդյունքում ՓԱՐԹՆԵՐՇԻՓ ՖՈՐ ՍԸՓԼԱՅ ՉԵԻՆ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԻՆՔ-ի հետ պայմանագիր միևնույն է չի կնքվելու, մենք նպատակահարմար չենք գտնում կատարել լրացուցիչ ծավալի աշխատանք ՀՀ առողջապահության նախարարության կողմից հայտարարված N ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/1/2 ծածկագրով գնման ընթացակարգի 6-րդ, 29-րդ և 30-րդ չափաբաժիններով ներկայացված փաստաթղթերը շտկելու ուղղությամբ:

Հարգանքով՝

PARTNERSHIP FOR SUPPLY CHAIN MANAGEMENT LLC
COMMONWEALTH OF MASSACHUSETTS
U.S.A.
2005

(signature)

Ուեսլի Կրեֆտ

PFSCM
Partnership for Supply Chain Management

Dear colleagues,

In response to your letter dated as of 26 February 2018 I would like to inform you that our Organization cannot agree to have an additional clause/condition stating that the total amount of payments to be realized in foreign currency should not exceed the amount fixed in Armenian drams (AMD) in the Contract for the rewarded lots under the Tender «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/1/2».

Please confirm the receipt of the letter via email.

Regards,

PARTNERSHIP FOR SUPPLY CHAIN MANAGEMENT, LLC
COMMONWEALTH OF MASSACHUSETTS
U.S.A.
2005
(signature)

Wesley Kreft
Director of PFSCM Global Supply Chain

1616 Fort Myer Drive, 12th Floor
Arlington, Virginia 22209-3100 USA
+1.571.227.8600

Polanerbaan 11
3447 GN Woerden, The Netherlands
+31.348.489.630

PFSCM's Quality Management System has been certified to ISO 9001:2015 Quality Management System Standard by UL DQS Inc. Reg# Registration #10012836 QM15

PFSCM is a partnership of JSI and MSH

www.pfscm.org | pfscm@pfscm.org